Խնածախ

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 96 կմ,
Հեռավորությունը Գորիս քաղաքից՝ 31 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1380 մ,
Կարգավիճակը՝ սահմանամերձ:
Գյուղը հնում կոչվել է Խանածախ կամ Խոնածախ և մտել է Սյունիքի Հաբանդ գավառի մեջ: Անվան ծագման մասին կան տարբեր ավանդություններ: Ըստ դրանցից մեկի՝ Խնածախը եղել է խանի կալվածք և այն վաճառել է (ծախել է), այստեղից էլ «Խանածախ» անունը: Մի այլ ավանդության, իբր թե հարձակվել են գյուղի տեր խանի վրա, որը կռվի ժամանակ ասել է՝ «Ձեզ մի զաղը (բույս) էլ չեմ տա», որից էլ «Խանազաղ», ոմանք էլ նախնական ձևը համարում են Խոնածախը՝ ստուգաբանելով որպես «խունկ ծախողներ»:
Գորիսի տարածաշրջանի մյուս գյուղերի նման այստեղ էլ կան երբեմնի բնակելի եղած քարանձավներ:Գյուղի տարածքում կան 1610թ. կառուցված եկեղեցի, Քարայր եկեղեցի և երկու մատուռ: Գյուղից քիչ հեռու Խաչին հով կամ Ցիցքար կոչվող վայրում կան 7-10-րդ դարերի գյուղատեղիներ («Մյուլքոն», «Պլաճա», «Ջալալ Հասանի») հին գերեզմանոցեր:
Գյուղում 1931-ին կազմակերպվել է կոլտնտեսություն, որը 1990-ին լուծարվել է:
Գյուղում է ծնվել բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ն.Բ.Հակոբյանը:
Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:

Հողային և այլ բնական ռեսուրսներ
Հողեր (ընդամենը)՝ 3237 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 3130 հա, որից՝
- վարելահող՝ 949 հա, բազմամյա տնկարկ՝ 28 հա, խոտհարք՝ 162 հա, արոտ՝ 784 հա, այլ հողատեսք՝1207 հա
- բնակավայրերի հողեր՝ 48 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 6 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝10 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 18 հա,
- հատուկ նշանակության հողեր՝ 9 հա,
- ջրային հողեր՝ 17 հա